Ծուշանիկ Կուրղինյան

Մահին

Եվ կուշտ, հագեցած կթողնեմ ես այս աշխարհը սիրուն . . .
Անեզր, անափ մոռացության մեջ, անհայտին մոտիկ,
Կը մոռնամ ես ձեզ, երկինք ու երկիր, ձմեռ ու գարուն:

Անխուսափելին մեզ կպսակե անբաժան կապով .
Մի փոքրիկ անկյուն մեծ տիեզերքից կընկնի ինձ բաժին՝
Ու հողն ու սրտեր ինձ կը տիրանան ագահ տագնապով:

Եվ դու իմ թմբին կը հսկես անտես, տրտում օրրով,
Քամուն կը պատմես իմ վերապրումի երկունքի մասին,
Ու երկնից երկիր միշտ կաղերսես աճյունիս գորով . . .

1909 թ. 24 փետրվարի